512

1. Եղբայրնե՛ր, ցնծացե՛ք,
Մեր կյանքն է անմար,
Դո՛ւք, քույրե՛ր, երգեցե՛ք
Փրկչի սերն անճառ:
Երբեմնի օտարից
Դարձանք բարեկամ,
Մենք հիմա շատ մոտ ենք
Քրիստոսի արյամբ:

(Հին եղանակով)
Բարձր երգենք, ալելուիա,
Տերն փրկեց մեզ և սրբեց,
Անուններն մեր հավիտյան Նա
Կյանքի գրքի մեջ գրեց:

(Նոր եղանակով)
Բարձրաձայն երգենք, Տերը մեզ
փրկեց,
Բարձրաձայն երգենք, Տերը
ազատեց,
Գրեց մեր անուններն Կյանքի
գրքի մեջ: (2)

2. Հիմա չենք մոտենում
Մենք Սինա լեռին,
Մեզ էլ չի սարսռեցնում
Որոտ մոլեգին:
Սուրբ խոսքը շնորհեց մեզ
Խաչից քավություն,
Փրկվեցինք մենք մահից
Քրիստոսի արյամբ:

3. Հավատքով, սիրով արդ
Ապրում ենք, շնչում,
Սպիտակ հանդերձով զվարթ
Դեպ երկինք թռչում:
Սուրբ հույսով կենսավետ
Մեր սրտերն՝ խնդում,
Կապրենք կյանքով հավետ
Քրիստոսի արյամբ: